

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

№ ը/կ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարողը	Համակատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը	Հղումը
1	2	3	4	5	6	7	8
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն							
1.	ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացման ապահովում	բնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզում, բնակչության ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար նպաստավոր պայմանների ստեղծում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով ընտանեկան կապերի ամրապնդում և առողջ կենսակերպի գաղափարների արմատավորում, սոցիալական հավասարության խթանում, հաշմանդամների շրջանում բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավում և հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանում, մասնակից ընտանիքների թվի աճ՝ հասցնելով մոտ 2100-ի	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ մարզպետարաններ Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե	ՀՀ Նախագահի 2004 թվականի մայիսի 20-ի ՆԿ-113-Ն կարգադրություն

1	2	3	4	5	6	7	8
2.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 4-ի N 587-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում ներկայացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը վերապահված քաղաքականության արդյունավետ իրականացման նպատակով մարզական կոչումների և մարզական կարգերի շտրհման չափորոշիչների արդիականացում	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն		մարտի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.6.3-րդ ենթակետ
3.	«Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցները, մարզաձևերի ազգային ֆեդերացիաները և այլ մարզական հասարակական կազմակերպություններ գույքով ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	հանրապետության մարզադպրոցների, մարզական քոլեջների, մարզաձևերի ազգային ֆեդերացիաների և այլ մարզական հասարակական կազմակերպությունների նյութատեխնիկական բազայի ամրապնդում, ժամանակակից մարզագույքով և մարզասարքերով ապահովում	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն		մարտի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե	ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.6.3-րդ ենթակետ
4.	«Հրաձգություն մարզաձևի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում հրաձգություն մարզաձևի զարգացում, դիպուկահարների պատրաստում, սահմանամերձ շրջանների ամբողջ բնակչությանը գենքի տիրապետման ուսուցանում	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն		սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.6.3-րդ ենթակետ

1	2	3	4	5	6	7	8
5.	Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացման ապահովում	հաշմանդամների տարբեր խմբերի անձանց հասարակությանն ինտեգրման գործընթացի խթանում, հաշմանդամային սպորտի զարգացում, առողջ կենսակերպի գաղափարի արմատավորում, միջազգային մրցասպարեզներում, պարաօլիմպիկ, սուրդօլիմպիկ ու հատուկ օլիմպիադաների խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում հայ մարզիկների կողմից բարձր նվաճումների ձեռքբերման նպաստում, սոցիալական հավասարության և հաշմանդամություն ունեցող անձանց տարբեր խմբերի հասարակությանն ինտեգրման գործընթացի խթանում	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ մարզպետարաններ Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	հունիսի 1-ին տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե	ՀՀ Նախագահի 2004 թվականի մայիսի 20-ի ՆԿ-113-Ն կարգադրության 1-ին կետի «ե» ենթակետ, ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.6.3-րդ ենթակետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ